Մ. Խ. ДАРВЕШЯН (Мамое Халыт), *Скотоводческое хозяйство курдов Восточной Армении* (по материалам второй половины XIX—начала XX вв.), Ереван изд-во АН Арм. ССР, 1986, 148 с.

Մ. Խ. ԴԱՐՎԵՇՅԱՆ *(Մամոե Խալիթ)*, **Արևելյան Հայաստանի քրդերի անասնապահական տնտեսությունը** *(19-րդ դ. երկրորդ կեսի— 20-րդ դ. սկզբի նյութերով)*, *Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1986, 148 էջ։*

Քուրդ ժողովրդի պատմությունն ու մշակույթը ուսումնասիրողների ուշադրությանն են արժանացել՝ սկսած XIX դ. կեսերից, այնուհետև հատկապես սովետական շրջանում։ Ելնելով այն հանգամանքից, որ համեմատաբար սակավ են եղել գրավոր աղբյուրների ընձեռած հնարավորությունները քրդերի անասնապահական տնտեսության վերաբերյալ, հենց սկզբից էլ առաջնությունը տրվել է նրանց կենցաղամշակութային յուրահատկությունների հետազոտությանը, որի համար հաջուստ նյութ է տվել ազգագրական իրականությունը։

Ժամանակին ավանդույթ է դարձել սոցիալական կյանքին ու կենցաղին, հավատալիքներին ու ժողովրդական պատկերացումներին, բանահյուսությանը և առհասարակ հոգևոր մշակույթին վերաբերող երևույթների հետազոտությունը, իսկ տնտեսական զբաղմունքներին ու նյութական մշակույթին համեմատաբար նվազ ուշադրություն է հատկացվել։ Նման մոտեցումը հատուկ է եղել մասնավորապես անցյալի քրդագիտությանը, ընդհուպ մինչև 1950-ական թվականների վերջերը։ Մինչդեռ առանց քրդերի կացութաձևի պատմաազգագրական հետազոտման հնարավոր չէր ամբողջական պատկերացում կազմել նրանց էթնո-մշակութային պատմության վերաբերյալ։

Սույն աշխատանքը գալիս է զգալապես լրացնելու նշված բացը, քանի որ անասնապահությունը դարձյալ ի վեր եղել է քրդերի կենսապահովման հիմնական տնտեսաձևը, և նրանց կենցաղամշակութային ամբողջ համալիրն իր բազմազան դրսևորումներով պայմանավորված է եղել այդ տնտեսաձևով։

Ավելի քան տասը տարվա ընթացքում Մ. Խ. Դարվեշյանը, շրջելով գյուղ առ գյուղ, ամենայն բարեխղճությամբ, այդ նպատակով կազմված հատուկ հարցարանով դաշտային ազգագրական նյութեր է հավաքել Արևելյան Հայաստանի ընտարածքի հիմնական մասը կազմող Հայկական ՍՍՀ-ում ապրող քրդերից՝ ոչ միայն իր բուն թեմայի, այլև առհասարակ նյութական ու հոգևոր մշակույթի, տնտեսության ու սոցիալական կյանքի վերաբերյալ, այդ ամենը համադրելով հնարավոր գրավոր աղբյուրների ուղղակի և անուղղակի տեղեկությունների, քրդերի ազգագրությանը վերաբերող ուսումնասիրությունների հետ։ Հիմնվելով սովետական ազգագրության մեջ մանավանդ վերջին շրջանում անասնապահական կացութաձևին նվիրված աշխատություններում առաջ քաշված դրույթների վրա, հեղինակը ներկայացրել է քրդերի անասնապահական զբաղմունքի տնտեսամշակութային տիպաբանության քննությունն ամբողջացնող աշխատանք։

Աշխատության մեջ նյութերի համակողմանի և, ըստ իս, նորովի քննությամբ, ելնելով Արևելյան Հայաստանի բնա-էկոլոգիկ, էթնո-մշակութային և սոցիալ-քաղաքական պայմանների յուրահատկություններից, համոզիչ կերպով վերանայվում և ճշգրտվում են քրդերի XIX դ. երկրորդ կեսի և XX դ. սկզբների անասնապահության վարման եղանակներին վերաբերող պատմատական բնութագրումները։ Ըստ այդմ, ցույց է տրվում, որ Արևելյան Հայաստանին հատուկ ուղղաձիգ գոտիականությունը և ընդարձակ տափաստանային արոտավայրերի բացակայությունը, մյուս կողմից, երկրագործական տնտեսամշակութային տիպով բնութագրվող հիմնական էթնիկ զանգվածի՝ հայերի, առկայությունը, որոնց հետ քրդերը, մասնավորապես եզդիները, միշտ էլ գտնվել են կենցաղամշակութային սերտ աղերսների մեջ, բացառում էին զուտ քոչվորային տնտեսաձևի գոյատևման հնարավորությունները։ Ահա ինչու, Արևելյան Հայաստանում XIX դ. սկզբներից վերաբնակված քրդերը ժամանակի ընթացքում, հարմարվելով նոր պայմաններին, վարել են հիմնականում անասնապահության երկու՝ կիսավաչկատուն և արտագնա ձևեր՝ իրենց տարատեսակներով։ Այս ամենը, ինչպես ասվեց վերը, հանգամանորեն ցույց է տրվում կոնկրետ նյութերի պատմահամեմատական քննությամբ, ներառելով նաև Վրաստանի ու Ադրբեջանի քրդ-

դերին վերաբերող տվյալները, զուգահեռներ անցկացնելով Կովկասի, Միջին Ասիայի և Առաջավոր Ասիայի անասնապահության վարման համանման եղանակների հետ։

Աշխատանքը բաղկացած է հինգ գլխից, ներածությունից, ամփոփումից, ծանոթագրություններից (օգտագործած գրականության ցանկ), էթնո-աշխարհագրական անվանումների ցուցիչից, հագեցված է իլյուստրատիվ նյութով։

Ներածության մեջ տալով հիմնական նպատակն ու խնդիրները, հեղինակը բնութագրում է այն սկզբնաղբյուրներն ու մասնագիտական գրականությունը, որոնք նյութ ու մեթոդական հիմք են ծառայել աշխատության շարադրման համար։ Ինչպես ցույց է տալիս հետագա ամբողջ շարադրանքը, հեղինակը քաջատեղյակ է ոչ միայն քրդագիտական, այլ առհասարակ անասնապահական մշակույթին վերաբերող սովետական և մինչսովետական շրջանների բավական հարուստ գրականությանը, մի հանգամանք, որն ինքնին ընդլայնում է հետազոտության շրջանակները։

Ըստ էության, ներածական բնույթի է նաև աշխատության առաջին՝ «Անասնապահական տնտեսության դասակարգման սկզբունքները ժամանակակից ազգագրության մեջ» գլուխը, ուր փորձ է արվում բնութագրել քրդերի անասնապահական տնտեսության վարման տիպարանական պատկերը, այն դիտարկելով ժողովրդի կացութաձևի պատմական շարժընթացի համակարգում։

Երկրորդ «Արևելյան Հայաստանի քրդերի անասնապահական տնտեսության զարգացման բնապատմական պայմանները» գլուխը, նվիրված է այն բնաէկոլոգիկ և սոցիո-պատմական միջավայրի հետադարձ ժամանակագրական ու բնատարածքային բնութագրմանը, ուր ընթացել է քրդերի անասնապահական տնտեսության վարումն ու զարգացումը։ Այդ միջավայրը Հայկական լարձրավանդակի հյուսիս-արևելյան հատվածն է՝ իր բազմազան բնակլիմայական պայմաններով, հայոց երկրագործաանասնապահական սիմբիոզ տնտեսության միջավայրով և XIX դ. երկրորդ կեսի— XX դ. սկզբի քաղաքական բուռն իրադրությամբ, պարագաներ, որոնք որոշակի դրոշմ են դրել քրդերի անասնապահական տնտեսության վարման եղանակների վրա։

Աշխատության բուն էությունը բացահայտվում է հաջորդ երկու գլխում, որոնք կրում են «Անասնապահության կիսավաչկատուն ձևը» (3-րդ գլուխ) և «Անասնապահության արտագնա ձևը» (4-րդ գլուխ) խորագրերը։

Հիմնվելով իր իսկ հավաքած դաշտային ազգագրական բազմազան նյութերի և հնարավոր դրավոր տեղեկությունների վերլուծության վրա, հեղինակը փաստորեն ուղղակի և անուղղակի բանավեճի մեջ է մտնում Արևելյան Հայաստանի քրդերի տնտեսության վարման և եղանակների ավանդութային բնութագրումների հետ, փորձելով նորովի մոտեցում ցուցաբերել այդ կարևոր հարցին։ Այսպես, նա կարողանում է համոզիչ փաստարկներով ապացուցել, որ Արևելյան Հայաստանի կոնկրետ պայմաններում XIX դ. երկրորդ կեսին— XX դ. սկզբներին քրդերն ունեցել են տնտեսության վարման երկու հիմնական եղանակ՝ անասնապահության կիսավաչկատուն և արտագնա ձևերը՝ իրենց սեզոնային ենթաձևերով, համապատասխան չափերով զուգորդված երկրագործության հետ, որը և նախադրյալներ է ստեղծել նստակեցության անցնելու, որպիսի պրոցեսը, սակայն, ժամանակագրական վերը նշված հատվածում ավարտի չի հասել (մի բան, որը կատարվեց ավելի ուշ, արդեն սովետական շրջանում)։

Աշխատության վերջին՝ «Անասունների արածեցման համագործակցության ձևերը։ Հովվություն» գլուխը, նույնպես հույժ կարևոր է խնդրո առարկայի էությունը բացահայտելու առումով, սակայն շարադրանքում որոշ հապճեպություն է նկատվում։ Այդուհանդերձ, ուշագրավ են տնտեսությունների աշխատանքային համագործակցության բնութագրումներն ըստ արենակցական-ազգակցական և բնատարածքային բաժանումների՝ հավասար և անհավասար սկզբունքներով։

Մ. Խ. Դարվեշյանի սույն աշխատությունը, այսպիսով, կարելի է գիտել նոր խոսք ոչ միայն քրդագիտության, այլև անասնապահական մշակույթի հետազոտության բնագավառում առհասարակ։

ԴԵՐԵՆԻԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ
պատմական գիտությունների թեկնածու